ՍՈՆԱ ՊՈՂՊԱՏՅԱՆ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Կրթական համակարգի գործունության և զարգացման հումանիստական միտումների թվում անհրաժեշտ է առանձնացնել գլխավորը՝ կողմնորոշումը դեպի անձնավորության զարգացում: Այսօր առկա է իրական հնարավորություն թույլ տալ մարդուն տիրապետել ոչ միայն մասնագիտական գիտելիքներին, այլև համամարդկային մշակույթին, այդ հիման վրա ապահովել անձնավորության բազմակողմանի զարգացումը՝ հաշվի առնելով կրթության կադրային ներուժի և նյութական բազայի հետ կապված բարենպաստ սուբյեկտիվ /անձնավորության պահանջմունքները/ և օբյեկտիվ պայմանները:

Երեխայի անձնավորության զարգացումը մի ամբողջական գործընթաց է: Անձնավորության առանձին կողմերը չեն կարող զարգանալ նրա մյուս հատկանիշներից և հատկություններից անկախ: Մարդկային անձնավորության զարգացման գործընթացը չի դադարում ամբողջ կյանքի ընթացքում: Վաղ պատանեկության շրջանը կապված է զգացմունքային, մտավոր, բարոյական և կամային փոփոխությունների հետ, որոնք պայմանավորված են անհատական գիտակցության ոլորտում բազմաթիվ կարևոր նորագոյացումների առաջացմամբ: Մասնավորապես, բարձր դասարանցիների մեջ ձևավորվում է էմպատիայի ընդունակություն՝ մի հատկություն, որն արտահայտվում է մարդկանց ներաշխարհ թափանցելու և այն հասկանալու կարողությամբ: Վերն ասվածից կարելի է եզրակացնել, որ իրականության նկատմամբ դպրոցականների հուզագգայական վերաբերմունքի դաստիարակման և զարգացման գործում դպրոցի աշխատանքային գործունեության հաջողություններն ու ձեռքբերումները էականորեն կախված կլինեն անհատի հիմնախնդիրներով զբաղվող մանկավարժների և հոգեբանների սերտ կապից և փոխգործողություններից: Այդ կապը պետք է լինի ստեղծագործական և փոխադարձ հարստացնող:

Ավանդույթների ընդհատության պատճառով ժամանակակից հոգեբանության մեջ ստեղծված իրավիճակը բնութագրվում է նրանով, որ անձնավորության հոգեբանության հիմնախնդիրների պատմա-տեսական իմաստավորումը սկսվել է համեմատաբար վերջերս, երբ անձնավորության կատեգորիան սկսեց ձեռք բերել բազային կարգավիճակ՝ արտացոլման, գործունեության, գիտակցության կարգավիճակների հետ միասին: Դրան նախորդել է

անձնավորության մասին տեսական և փորձարարական տվյալների կուտակումը հոգեբանության հիմնական ճյուղերի ենթատեքստում:

Հայրենական հոգեբաններն առանձնացրել են անձնավորության զարգացման 4 շրջան: Առաջին ընդգրկում է 19-րդ դարի վերջին տասնամյակները – 20-րդ դարի 20-ական թվականները: Այդ շրջանի համար էական և բնութագրական էր անձնավորության բուն գաղափարի առաջացումը: Մարդու վերափոխումը անձնավորության դիտարկվում էր որպես իդեալական մոդել, որպես նրա զարգացման սոցիալապես ցանկալի արդյունք: Անձնավորության գաղափարը աստիճանաբար փոխակերպվում է բազմակողմանի զարգացած անձնավորության գաղափարի, բայց նրա ձևավորման ուղիներն ու միջոցները միայն ուրվագծվում են: Փիլիսոփայության, էթիկայի և մանկավարժության մեջ ձևավորված անձնավորության գաղափարը մասնակիորեն էր ներդրվում հոգեբանության մեջ, չնեղելով նրա հիմնախնդիրների ամբողջությունը և չդառնալով նրա ինքնուրույն բաժինը կամ ուղղությունը: Անձնավորության հիմնախնդիրների ամբողջությունը դեռ նոր է որոշակի գծերով ի հայտ գալիս և չունի ոչ միայն ֆենոմենոլոգիական, այլև իմաստաբանական տարածություն: Այդ կապակցությամբ, մեր կարծիքով, կարելի է անել հետևալ եզրակացությունը. անձնավորության հոգեբանության զարգացման առաջին շրջանի համար բնորոշ են ընդհանուր փիլիսոփայական մոտեցումը, տեսական մոտեցումների չտարբերակվածությունը, փորձարարական ուսումնասիրության սաղմերը, սոցիալական պրակտիկայով անձնավորության մասին հոգեբանական գիտելիքների պահանջարկի բացակայությունը:

Երկրորդ շրջան 20-րդ դարի 60-ական թթ. կեսեր:

Անձնավորության հիմնախնդիրն սկսում է գրավել հաստատուն դիրք, ձեռք է բերում կարգապահական բնույթ: Իրականացվում է սահմանային նշանակման փորձ և անձնավորության բացահայտում որպես հոգեբանական կատեգորիա: Նախատեսվում են անձնավորության ուսումնասիրման ավելի հստակ ֆենոլոգիական ոլորտներ՝ կամք, ակտիվություն, բնավորություն, խառնվածք, գիտակցություն, անձնավորության ոչ գիտակցական զարգացում...

Անձնավորության հիմնախնդիրների ամբողջական նշանակությունը ոչ միայն բանավեճերի նյութ չէ, այլև դառնում է աքսիոմային...Իրականում կատարվում էր «մարդ» բառի պարզագույն նենգափոխում «անձնավորություն» տերմինով, որը համարյա երաշխիք ծառայեց նրա հոգեկան և սոցիալական հիմնավորվածության համար: Միտումը սահմանափակվում է միայն անձնավորության սոցիալականության մասին բանավոր հայտարարություններով և երկար պահպանվում էր խորհրդային հոգեբանության մեջ:

Երրորդ շրջան 20-րդ դարի 60-ականների կեսեր – 80-ականների վերջ:

Այս շրջանը «նոր խորհրդային մարդու» կոնցեպցիայի ստեղծման շրջանն էր, որի անհրաժեշտությունը որոշվում էր ղեկավարող կուսակցության գաղափարական պատվերով: Նորից խառնաշփոթ է ստեղծվում անձնավորության ուսումնասիրման հոգեբանական և սոցիալական մակարդակներում: Նկատելի է անձնավորության հիմնախնդիրների համակարգը դեպի ճանաչողական և հուզական գործընթացներին մոտեցնելու ձգտումը: Որոնվում են անձնավորության զարգացման և ձևավորման մեխանիզմներ:

Չորրորդ շրջան՝ 20-րդ դարի 80-90-ական թվականներ: Այդ ժամանակահատվածում պահպանվում են երրորդ շրջանի առանձնահատկություն-ները, բայց ուժեղացվում է ուշադրությունը մեթոդաբանական տեսակետների նկատմամբ, հռչակվում է անձնավորության տեսության ստեղծումը, հաստատվում է անձնավորության հոգեբանական հիմնախնդրի ավելի սերտ կապ փիլիսոփայության, էթիկայի, սոցիոլոգիայի, մանկավարժության, ֆիզիոլոգիայի հետ: Կրկին հռչակվում են անձնավորության ամբողջականության մասին նախկինում հանրաճանաչ կարգախոսներ նրա առանձին տարրերի միջև փոխադարձ կապ հաստատելու անհրաժեշտության մասին: Անձնավորությունը հայտարարվում է համակարգային որակ:

Կատարվում է անձնավորության ուսումնասիրության համակարգային մոտեցում կիրառելու փորձ, անվանվում են ենթահամակարգերը:

Բարձրագույն հումանիստական իմաստ է հայտարարվում մարդու՝ որպես կյանքի բարձրագույն արժեքի նկատմամբ վերաբերմունքը, մարդը ճանաչվում է որպես զարգացման ինքնանպատակ և հասարակական առաջադիմության գնահատման հիմնական չափանիշ: Հասարակության կյանքի հումանիզացման սկսված գործընթացն էլ ավելի հաստատեց անձնավորության հոգեբանության կարգավիճակը՝ որպես ամբողջ հոգեբանական գիտության հիմնական ուղղություններից մեկի: Այսպիսով «վերադարձը դեպի անձնավորություն դառնում է ժամանակակից հոգեբանության զարգացման առավել նշանակալից կոնցեպցիաներից մեկը»: (1)

Վերլուծելով այդ դինամիկան կարելի է ենթադրել, որ անձնավորության հոգեբանության ապագան այն կոնցեպցիաների և տեսությունների օգտին է, որոնք ձեռք կբերեն համամարդկային կարգավիճակ: Գուցե, ինտեգրված մարդկության մասին գաղափարը, իր մեջ ներառելով ամբողջական անձնավորության գաղափարը, վերածվում է մոլորակային անձնավորության որոնման, որը ձևված է ոչ որևէ առանձին երկրի մասշտաբներով:

Ներկայումս գոյություն ունի «մարդու» մասին հսկայական թվով փիլիսոփայական հայեցակարգեր: Սոցիոլոգիայում և հոգեբանության մեջ կան մարդու վերաբերյալ ոչ պակաս թվով տարբեր տեսակետներ և նրա տարբեր հատկանիշներն ու հատկությունները շատ թե քիչ մանրամասն նկարագրելու

փորձեր: Եվ, այնուամենայնիվ, այդ բոլոր գիտելիքները չեն կարող բավարարել մանկավարժությանը և միմյանց հետ հարաբերակցելիս չեն դիմանում փոխադարձ քննադատությանը:

Եթե դրանք խմբավորենք, կստանանք, էստ էության, «մարդու» խառնվածքի երեք արմատապես տարբեր ըմբռնում. 1.«Բիոիդ» (կենսաբանական էակ), 2. «Անհատ», 3. «Անձնավորություն»:

Իսկ մանկավարժությունը պահանջում է մարդու մասին այնպիսի ճշգրիտ գիտելիքներ, որոնք միավորեն մարդու մասին վերը նկարագրված երեք պատկերացումները, դրանք սինթեզեն մեկ բազմակողմանի և պարզ արտահայտված տեսական գիտելիքում:

Դաստիարակությունը հումանիտարացնելու, դաստիարակչական գործունեության առանձնահատուկ հումանիստական սկզբունքներն ամենուրեք հաստատելու խնդրի համառությունը գիտակցում են շատերը: Սակայն ոչ միշտ են այդ դեպքում հասկանում, որ դրա հաջող լուծումը կախված է ոչ միայն լուրջ գործնական դժվարությունների հաղթահարումից, այլև հիմնախնդրի տեսական մշակվածության վիճակից: Հումանիտարացումը ենթադրում է դաստիարակության ամբողջական հումանիստական մոդելի կիրառում: Նրա մշակումը ենթադրում է ժամանակակից հասարակության բարոյագիտական իդեալի պարզաբանում: Բարոյագիտական դաստիարակության արդյունք պետք է դառնա ոչ թե նվիրածությունը տվյալ գործին և ատելությունը նրա թշնամիների նկատմամբ, այլ Ամոթը, Կարեկցությունը, Գթասրտությունը, Սերը մարդկանց նկատմամբ՝ հենց սրանում է, եթե ոչ բոլորովին նոր և անհայտ ճշմարտությունը, այն հիմնովին մոռացված և վարկաբեկված անցյալ տարիներինը, այդ պատճառով էլ ասես նոր հայտնագործված:

Ներդաշնակ, ստեղծագործ, հոգեպես հարուստ և բարձր բարոյական անձնավորության դաստիարակությունը մեր հասարակության կարևորագույն խնդիրն է: Վերակառուցման գործընթացն առանձնապես վառ կերպով ցույց տվեց հասարակական զարգացման կախվածությունը մարկային հատկություններից, «մարդկային գործոնից»: Ընդ որում առավել սուր հիմնախնդիր դարձավ մարդու բարոյագիտական հուսալիությունը, որը ամենաբարդ, առանձնահատուկ իրավիճակներում պետք է ընդունի մարդկային որոշումներ, կատարի բարոյապես արժանի քայլեր:

Բարոյագիտական հուսալիությունը անձնավորության ինքնադաստիարակության և դաստիարակության արդյունք է: Դաստիարակչական գործընթացն անհարժեշտ է ղեկավարել: Դաստիարակության տարերայնությունը բերում է նրան, որ շատ երիտասարդներ մեծանում են հենց բարոյապես ոչ հուսալի և հոգեպես աղքատ: Անձնավորության բարոյական հատկությունները դրսևորվում են բարձր զգացմունքների ձևով, որոնց թվում է էմպատիան,այն

ընկալվում է որպես այլ մարդու զգացմունքային, հուզական վիճակների ըմբռնում, նրա ապրումների մասնակցի ձևով: Զգացմունքային կարեկցանքը դրված է հասարակության այնպիսի կարևոր հատկության հիմքում, ինչպիսին է գթասրտությունը: Զգացմունքային կարեկցանքը կարելի է, պետք է զարգացնել նպատակաուղղված ձևով:

Մարդն արժանի է այն բանին, որ ապրի ոչ թե դիմազուրկ կամ հակաանձնական, այլ ներքին խորը կյանքով լի, հանդես գա իր յուրաքանչյուր վարմունքի հեղինակ և արարիչ, որ նրա վարմունքը և ողջ կյանքը դառնան սուբյեկտի կեցություն, որ յուրաքանչյուրում միանա բազմակողմանիությունն ու եզակիությունը՝ միայն այս պայմաններում մարդը պարզորեն կտեսնի իր հեռանկարը ապագայում:

Անձնավորության ներքին բովանդակությունը օբյեկտիվ աշխարհի օրինաչափություններն իր գիտակցության մեջ մեխանիկորեն ներդրելու հասարակ արդյունք չէ, այլ հենց անձնավորության ներքին աշխատանքի արդյունք, որի գործընթացում արտաքին գործոնների բովանդակությունը, անկախ նրա գիտակցությունից, ինտերիերացվում է, դառնում անհատի գործունեության գործիք: Այլ խոսքով, արտաքին պայմաններով անձնավորության դիտերմինացվածությունն իրականացվում է նրա սուբյեկտիվության միջոցով , և ոչ թե առանց նրա: Ըստ որում տվյալ անհատի կողմնորոշման մեջ կարևորագույն դեր է խաղում արժեքների մեխանիզմն ու համակարգը:

Ի՞նչ ձևով կարելի է ակտիվացնել մարդու ստեղծագործական ներքին հնարավորությունները, ազատագրել նրա ընդունակություններն ու զգացումները: Շատերի պատասխանը պարզ է. դրա համար, ամենից առաջ, մարդու գոյության պայմանները հարկավոր է դարձնել մարդկային: Այո, ընդհանրապես, դա այդպես է: Սակայն կյանքը ցույց է տալիս, որ ոչ մի արտաքին պայմաններ, որքան էլ դրանք մարդու համար բարենպաստ լինեն, չեն կարող ինքնին հանգեցնել նրա ընդունակության իրականացման: Դրա համար հարկավոր են նաև անձնական ձգտումներ, ինքնաղիտողություն, կամք, ներքին ազատություն, տվյալ անհատի հոգեկան հարստություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Абульканова-Славская К.А. Стратегия жизни М.: Мысльё 1991.
2. Зимняя И.А. Педагогическая психология, Учеб.пособие — Ростов нёд, Изд-во Фениксё 1997.
3. Кон И.С. Психология старшеклассника. М.,Просвещениеё 1982.
4. Андреева М.К. Гуманитаризация содержания образования в профтехучилищах. (Методическое пособие). Спб. 1992.